

# CANDLELIGHT VIGIL IN MEMORY OF VAHE AVETYAN

*Posted on July 25, 2012 by Keghart*




Category: [Opinions](#)



Օգոստոս 1, 2012

Հարգելի հայրենակիցներ,

Օգոստոսի 7-ին (երեքշաբթի) Հայաստանում նախատեսվում է մոմավառություն Վահե Ավետյանի ողբերգական մահվան քառասուներորդ օրվա կապակցությամբ: Վահեի  մահը ցնցեց ողջ հայությանը, այդ թվում նաև Կանադայում բնակվող մեր հայրենակիցներին: Ուստի սպասվում է, որ օգոստոսի 7-ի մոմավառությունը ևս կլրի համահայկական բնույթ, որով մեր ժողովուրդը կրկին ցույց կտա, որ Վահեի հարազատների վիշտը բոլորինս է, և յուրաքանչյուրս այս ծանր պահին մտովի իրենց կողքին ենք: Բայց նաև իրենց կողքին ենք այս աննկարագրելի վայրագության բոլոր մեղավորներին բացահայտելու և պատժի ենթարկելու մեր համազգային պահանջով, որովհետև գիտակցում ենք, որ մեր հայրենիքում առկա հանգամանքները, որոնք հնարավոր դարձրին այսպիսի հանցագործությունը սասանում են մեր այդքան դժվարությամբ ձեռք բերած պետականության հիմքերը:

Մոմավառությանը մասնակցել ցանկացող Տորոնտոյում և նրա մերձակայքում բնակվող մեր հայրենակիցներին խնդրում ենք երեքշաբթի, օգոստոսի 7-ին, երեկոյան ժամը 7-ին հավաքվել Տորոնտոյի Սուրբ Երրորդություն եկեղեցուն և AGBU Տորոնտոյի գրասենյակին հարակից տարածքում:

Մի խումբ կանադահայեր

**Ընդվզում. Հարսնաբարը՝ «հանցաբար»**

## **Candlelight Vigil in Memory of Vahe Avetyan**

Tuesday, August 7, 2012 at 7:00 p.m


In the vicinity of

Holy Trinity Armenian Church and AGBU premises

920 Progress Avenue, Toronto ON

Օգոստոս 1, 2012

Հարգելի հայրենակիցներ,

Օգոստոսի 7-ին (երեքշաբթի) Հայաստանում նախատեսվում է մոմավառություն Վահե Ավետյանի ողբերգական մահվան քառասուներորդ օրվա կապակցությամբ: Վահեի  մահը ցնցեց ողջ հայությանը, այդ թվում նաև Կանադայում բնակվող մեր հայրենակիցներին: Ուստի սպասվում է, որ օգոստոսի 7-ի մոմավառությունը ևս կլրի համահայկական բնույթ, որով մեր ժողովուրդը կրկին ցույց կտա, որ Վահեի հարազատների վիշտը բոլորինս է, և յուրաքանչյուրս այս ծանր պահին մտովի իրենց

Կողքին ենք: Բայց նաև իրենց կողքին ենք այս աննկարագրելի վայրագության բոլոր մեղավորներին բացահայտելու և պատժի ենթարկելու մեր համազգային պահանջով, որովհետև գիտակցում ենք, որ մեր հայրենիքում առկա հանգամանքները, որոնք հնարավոր դարձրին այսպիսի հանցագործությունը սասանում են մեր այդքան դժվարությամբ ձեռք բերած պետականության հիմքերը:

Մոմավառությանը մասնակցել ցանկացող Տորոնտոյում և նրա մերձակայքում բնակվող մեր հայրենակիցներին խնդրում ենք երեքշաբթի, օգոստոսի 7-ին, երեկոյան ժամը 7-ին հավաքվել Տորոնտոյի Սուրբ Երրորդություն եկեղեցուն և AGBU Տորոնտոյի գրասենյակին հարակից տարածքում:

Մի խումբ կանադահայեր

**Ընդվզում. Հարսնաքարը՝ «հանցաքար»**

## **Candlelight Vigil in Memory of Vahe Avetyan**

Tuesday, August 7, 2012 at 7:00 p.m  
In the vicinity of  
Holy Trinity Armenian Church and AGBU premises  
920 Progress Avenue, Toronto ON

## **CANDLELIGHT VIGIL IN GLENDALE**

## **TO COMMEMORATE VAHE AVETYAN ON THE 40TH DAY OF HIS BURIAL**

Հարգելի հայրենակիցներ,

Դուք հրավիրված եք Վահե Ավետյանի քառասունքի առթիվ կազմակերպված համահայկական մոմավառությանը: Այն տեղի կունենա օգոստոսի 7-ին երեկոյան 7-ին Լոս Անջելեսում Հայաստանի հանրապետության հյուպատոսության շենքի առջև՝ 346 North Central Ave, Glendale 91203 հասցեում:

Վահե Ավետյանը դաժանորեն սպանվել է «Հարսնաքար» ռեստորանում, որը պատկանում է տիրահաջակ օլիգարխ, պատգամավոր Ռուբեն Հայրապետյանին՝ Նեմեց Ռուբոյին, ով շարունակում է խուսափել արդարադատությունից:

Այս համահայկական մոմավառությունը ապակուսակցական և որևէ քաղաքական շարժման չհարող միջոցառում է, որը տեղի է ունենալու Հայաստանում եւ հայկական սփյուռքի համայնքներում:

Dear compatriots,

You are invited to a candlelight vigil commemorating Vahe Avetyan's 40th day of burial. It will be held on August 7 at 7 pm in front of the Consulate General of Armenia in Los Angeles at 346 N. Central Ave, Glendale, CA 91203.

Vahe Avetyan was brutally murdered at Harsnakar restaurant owned by notorious oligarch, Deputy Ruben Hayrapetyan (Nemets Rubo), who has so far evaded justice.

This Pan-Armenian candlelight vigil is a non-partisan event, independent from any political movement, which will take place in Armenia and the communities of the Armenian Diaspora.

### **Կիրակի, 5 Օգոստոս 2012-ին, ժամը 11:00-ին**

**Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի** մեջ, Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Հայաստանի ազգային բանակի սպայ, զինուորական բժիշկ ՎԱՀԷ ԱԲԵՏԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ:

### **Օգոստոս 5, 2012**

**✘ Եվրոպայի Հայերի Համագումարը կրկին անգամ դատապարտում է ՀՀ բանակի սպա Վահե Ավետյանի սպանությունը եւ պահաջում խստիվ պատժել ոճրագործներին եւ բոլոր մեղսակիցներին**

Հարսնաքար ռեստորանում տեղի ունեցած ոճրագործության զոհ՝ ՀՀ բանակի սպա Վահե Ավետյանի սպանությունից շուրջ քառասուն օր անց, ողջամիտ հայության հետ միասնակամ, կրկին դատապարտում ենք ոճրագործ տարրերի ստոր ու փոքրոգի արարքը և ցավակցում ու զորակցում ենք նրա ընտանիքին, հարազատներին և արդարության պահանջով բողոքի ելած ողջամիտ հայությանը:

Իրագործված ոճիրը, ոչ միայն ՀՀ բանակը վարկաբեկող ստոր ու դավադիր գործողություն էր, այլև հայ ժողովրդի և հայկական պետականության դեմ ոտնձգություն:

Հետևաբար, պահանջում ենք, որ ՀՀ իշխանությունները թեկուզ հապաղած՝ օրենքի ուժով կասեցնեն օրինախախտ և քրեածին կենտրոնների և տարրերի՝ վաղուց իսկ սանձարձակության սահմանները հատած գործունեությունը՝ պատժելով ոչ միայն ոճրագործության անմիջական մասնակիցներին, այլև բոլոր մեղսակիցներին եւ պատասխանատուներին:

~~Չորակցում ենք, Հայաստանում և Սփյուռքում այս կապակցությամբ կազմակերպված և կազմակերպվելիք բոլոր շարժումներին և նախաձեռնություններին:~~

Կո՛չ ենք ուղղում, Վահե Ավետյանի սպանության քառասունքին՝ օգոստոսի 7-ին, կրկին մասնակցել կազմակերպվող մոմավառությանն ու համանման բոլոր նախաձեռնություններին:

**Եվրոպայի Հայերի Համագումար**

**Շվեդիա, 2012, Օգոստոսի 5**

